ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.09.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/146

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Երմեդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 02.09.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.08.2019թ. թիվ 26/26-1/14419-2019 գրությամբ «Երմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 26.08.2019թ. թիվ 01.3/11/20721-19 գրության հիման վրա, 29.08.2019թ. թիվ 26/26-1/14419-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Երմեդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Երմեդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երմեդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Ընկերությունը մասնակցել է ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ԲՎ/ԱՍ-72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել «Երմեդ» ՍՊԸ-ին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

13.08.2019թ. «Երմեդ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից գնահատող հանձնաժողովին է ներկայացվել դիմում՝ հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի գնահատող հանձնաժողով հայտնում եմ Ձեզ, որ վերը նշված ծածկագրով 05.08.2019թ. հայտարարված ընթացակարգին հայտ եմ ներկայացրել 06.08.2019թ., սակայն տեխնիկական վրիպակի պատճառով առաջարկվել է գնման առարկայի միավոր գին, որը կազմում է 5.100.000 ՀՀ դրամ:

Պատճառը հանդիսացել է նաև նախկինում հայտարարված և չկայացած ընթացակարգի քանակը, որն եղել է 1 հատ, այդ ժամանակ էլ առաջարկվել է միավորի գին՝ իմ կազմակերպության կողմից 5.100.000 ՀՀ դրամ: Խնդրում եմ Ձեզ հաշվի առնելով տվյալ հանգամանքը և այն որ ես պատրաստ եմ համագործակցել պատվիրատուի հետ և որ նախկինում իմ կազմակերպության կողմից որևէ խախտում չի արձանագրվել, ուստի տվյալ հարցիս վերաբերյալ հնարավորինս մեղմ և չընդգրկել մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում»:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Երմեդ» ՍՊԸ-ն ներկայացրել է դիմում ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, քանի որ տեխնիկական վրիպակի պատճառով ներկայացրել է գնման առարակայի միավորի գին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե.

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Վերը նշված դիմումի բովանդակությունից պարզ է դառնում, որ «Երմեդ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևիցե խախտում, այն է՝ չի հրաժարվել ընթացակարգի հետագա մասնակցությունից, քանի որ դիմումում հնարավոր չէ գտնել որևէ կետ, որով Ընկերությունը հրաժարվել է իր վրա դրված պարտականություններից, կամ հրաժարվել իր հայտից կամ որևիցե կերպ հայտարարել է, որ դադարեցնում է իր մասնակցությունը: Ավելին, գնահատող հանձնաժողովին ուղղված դիմումում Ընկերությունը նշելով, որ տեղի է ունեցել սխալ գնային առաջարկում, խնդրել է հաշվի առնել այս սխալը, բայց միևնույն ժամանակ հայտնել, որ այնուամենայնիվ, այս հարցում պատրաստ է համագործակցել Պատվիրատուի հետ: Նույն դիմումով «Երմեդ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին խնդրել է միայն Ընկերությանը չընդգրկել մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում՝ մինչդեռ գնահատող հանձնաժողովը նույնիսկ այդպիսի լիազորություն չունի:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նկատի ունենալ, որ Ընկերությունը նաև բանավոր է հայտնել Պատվիրատուին, որ այս հարցում պատրաստ է համագործակցության և անգամ պատրաստ է առաջարկված գնով մատակարարել ապրանքը՝ մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում չընդգրկվելու համար:

Սակայն «Երմեդ» ՍՊԸ-ի կողմից նման բովանդակությամբ դիմում ներկայացնելու պայմաններում գնահատող հանձնաժողովը դիմումը ներկայացնելու հաջորդ օրը՝ 14.08.2019թ., նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է հետևյալը. «Երմեդ» ՍՊԸ-ն ներկայացրել է դիմում ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, քանի որ տեխնիկական վրիպակի պատճառով ներկայացրել է գնման առարկայի միավորի գին:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նկատի ունենալ, որ ըստ էության, գնահատող հանձնաժողովը նաև չի կայացրել որոշում՝ «Երմեդ»

ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ: Եվ փաստացիորեն բացակայում է վերջինիս մասնակցության դադարեցման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որևիցե որոշում:

«Երմեդ» ՍՊԸ-ն իր ոլորտում հանդիսանում է բարեխիղճ և պարտաճանաչ ընկերություն և նույնիսկ այս պայմաններում պատրաստ էր ֆինանսական կորուստով մատակարարել ընթացակարգով նախատեսված ապրանքը, որպեսզի ոչ մի պարագայում չներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Երմեդ» ՍՊԸ-ի կողմից 13.08.2019թ. ներկայացված դիմումի բովանդակությունը սխալ մեկնաբանելով՝ արձանագրել է, որ մասնակիցը հրաժարվել է հետագա մասնակցությունից, սակայն անգամ այս պայմաններում էլ չի մերժել Ընկերության հայտը:

Այն, որ «Երմեդ» ՍՊԸ-ն հանդիսանում է բարեխիղճ և պարտաճանաչ ընկերություն՝ փաստվում է նաև ՀՀ ոստիկանության բժշկական վարչության /հոսպիտալի/ պետի գրությամբ, որն ուղղված է ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետին. «Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ոստիկանության ԲՎ հոսպիտալը տարիներ շարունակ համագործակցել է «Երմեդ» ՍՊԸ-ի հետ, որի արյունքում ձեռք է բերել հսպիտալի գործունեության համար անհրաժեշտ բազմաթիվ բժշկական նշանակություն ունեցող այլ պարագաներ: Այս ամբողջ ժամանակահատվածում «Երմեդ» ՍՊԸ-ն իրեն դրսևորել է որպես բարեխիղճ և պատասխանատու գործընկեր՝ ժամանակին և որակյալ կատարելով իր պարտավորությունները, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ԲՎ հոսպիտալին պարբերաբար անհատույց տրամադրել է բժշկական նշանակության ապրանքներ և պարագաներ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ Ձեզ վերը նշված մասնակցին ընդառաջել և չներառել գնումների ընթացակարգին մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում:»:

Ստացվում է մի իրավիճակ, որ թե՛ «Երմեդ» ՍՊԸ-ն, թե՛ ՀՀ ոստիկանության բժշկական վարչության /հոսպիտալի/ պետի կողմից՝ ՀՀ ոստիկանությանն ուղղված դիմումներում միակ խնդրանքը եղել է՝ Ընկերությանը գնումների մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում չընդգրկելը /Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու լիազորությունը պատկանում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող ածին/, սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն արձանագրվել է, որ «Երմեդ» ՍՊԸ-ն ներկայացրել է դիմում

ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, քանի որ տեխնիկական վրիպակի պատճառով ներկայացրել է գնման առարակայի միավորի գին:

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում «Երմեդ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևիցե խախտում, այն է չի հրաժարվել ընթացակարգի հետագա մասնակցությունից, ինչը պարզ երևում է Ընկերության կողմից ներկայացված դիմումի բովանդակությունից, և չի խախտել իր վրա դրված պարտականություն:

Ավելին, այստեղ նաև բացակայում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված խախտման դեպքում վրա հասնող հետևանքը, այն է՝ մասնակցի մասնակցության դադարեցումը, հայտի մերժումը, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրություններում բացակայում է նաև «Երմեդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որևէ որոշում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները, Ընկերությունը խնդրել է «Երմեդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևիցե խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/146 ընթացակարգի շրջանակներում 03.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.08.2019թ. թիվ 01.3/11/20721-19 գրությամբ ներկայացրել է «Երմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/146 ընթացակարգի շրջանակներում 03.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ԲՎ/ԱՍ-72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երմեդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2019թ. ժամը նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Երմեդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Երմեդ» ՍՊԸ-ն ներկայացրել է դիմում Ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, քանի որ տեխնիկական վրիպակի պատճառով ներկայացրել է գնման առարկայի միավորի գին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2019թ. թիվ 26/26-1/14419-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության 26.08.2019թ. թիվ 01.3/11/20721-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ԲՎ/ԱՍ-72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երմեդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2019թ. ժամը նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Երմեդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 13.08.2019թ. գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերությունը 06.08.2019թ. հայտ է ներկայացրել, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով առաջարկվել է գնման առարկայի միավորի գին, որը կազմում է 5 100 000 ՀՀ դրամ: Պատճառը հանդիսացել է նաև նախկինում հայտարարված և չկայացած ընթացակարգի քանակը, որն եղել է 1 հատ, այդ ժամանակ էլ Ընկերության կողմից առաջարկվել է միավորի գին՝ 5 100 000 ՀՀ դրամ:

Նույն գրությամբ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել տվյալ հանգամանքը և այն, որ Ընկերությունը պատրաստ է համագործակցել պատվիրատուի հետ և որ նախկինում Ընկերության կողմից որևէ խախտում չի արձանագրվել, ուստի տվյալ հարցին վերաբերվել հնարավորինս մեղմ և իրեն չընդգրկել մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Երմեդ» ՍՊԸ-ն ներկայացրել է դիմում Ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, քանի որ տեխնիկական վրիպակի պատճառով ներկայացրել է գնման առարկայի միավորի գին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ Ընթացակարգի միակ մասնակիցը հանդիսացել է «Երմեդ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրելով «Երմեդ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ԲՎ/ԱՍ-72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 13.08.2019թ. դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով Ընթացակարգը չկայացած հայտարարելուց հետո Ընկերության գործողությունները, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ «Երմեդ» ՍՊԸ-ն ՍՑ-ՆԳ-2019/146 ընթացակարգի շրջանակներում ներկայացված գրությամբ պնդել է, որ վերջինս իրականում չի հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից, այնուամենայնիվ Ընկերության կողմից ներկայացված դիմումն իր բովանդակությամբ ըստ էության ուղղված է եղել Ընկերության՝ Ընթացակարգի հետագա մասնակցության դադարեցմանը՝ պայմանավորված միավորի գին առաջարկելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ գնահատող հանձնաժողովը նաև չի կայացրել որոշում՝ «Երմեդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ և փաստացիորեն բացակայում է վերջինիս մասնակցության դադարեցման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որևիցե որոշում, ապա հայտնում եմ, որ Ընկերությունը 13.08.2019թ. դիմումով հրաժարվել է Ընթացակարգի հետագա մասնակցությունից՝ դրանով իսկ դադարեցնելով իր մասնակցությունն Ընթացակարգին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Երմեդ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.08.2019թ. թիվ 26/26-1/14419-2019 գրությամբ «Երմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Երմեդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**